

ՆԵՐԱԿԱՅՈՒՄԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Ս.Գ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Լեզվական իմաստներն արտահայտման բնույթի տեսակետից երկու կարգի են՝ ա) իմաստ, որն ունի իր անմիջական ձևային դրսևորումը, բ) իմաստ, որը չունի իր արտահայտման ձևային միջոցը, իր ձևը, բայց հասկացվում, ենթադրվում է լեզվական տվյալ կառույցից: Առաջին կարգի իմաստը կոչվում է բացահայտ, արտակա (էքսպլիցիտ), երկրորդ կարգինը՝ թաքնված, ներակա (իմպլիցիտ): Իմաստի ներակա արտահայտումը կոչվում է իմաստի ներակայում: Սովորաբար ներակա իմաստը հանդես է գալիս արտակա իմաստի գույքորդումով: Այդպիսի գույքորդումը դիտարկենք, օրինակ, «Հեռուստածրագիր» բառի մեջ: Այս բարդ բառը սոսկ իր երկու հիմնական բաղադրիչներով՝ «Հեռուստ» և «ծրագիր», որոնք որոշակի իմաստների արտակա դրսևորումներ են, ինքնին վերցրած, չեն արտահայտում «Հեռուստածրագիր» հասկացության իրական իմաստը: Այս հարցում մեզ օգնում են այն ներակա իմաստները, որոնք բխում են «Հեռուստածրագիր» բառից: Այս բառի իրական իմաստն է՝ «Հեռուստատեսային հաղորդումների ծրագիր»: Ընդգծված են իմաստային այն բաղադրիչները, որոնք «Հեռուստածրագիր» բառում արտահայտված են ներակայումով: Կարևոր ներակայում կա նաև «Հեռուստատեսային» ածականի մեջ, որը կազմված է «Հեռուստատեսություն» գոյականից, հասկանալի է՝ «ուլթյուն» ածանցի գեղջումով: «Հեռուստատեսությունը», բնականաբար, չի կարող մեկնաբանվել սովորական «հեռվից տեսնելը» կապակցությամբ: Չմտնելով այդ տերմինի իմաստային մանրամասների մեջ՝ նրա իմաստը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. «տեխնիկական միջոցներով հեռավորության վրա տեսողական տեղեկատվության հաղորդում»՝ պատկերների օգնությամբ: Մեկ բառի իմաստային բաղադրիչների արտահայտման վերլուծությունը ցույց է տալիս, թե որքան մեծ կարող է լինել ներակայման դերը լեզվական կառույցի իմաստային համակարգի մեջ: Այս առումով միանգամայն օրինաչափ է, որ «ներկայումս կասկածից վեր է ներակա իմաստների ուսումնասիրման անհրաժեշտությունը, քանի որ լեզվական միավորի մասին ճիշտ պատկերացում ստանալու միակ ուղին արտակա և ներակա իմաստների միակցումն է»¹:

Կան ներակայման տարբեր ըմբռնումներ, ըստ այդմ էլ՝ ուսումնասիրության ոլորտի տարբեր ընդգրկումներ: Որոշ մասնագետներ ներակայումը հիմնականում հանգեցնում են «եթե... ապա» ասույթի տրամաբանական խորքային քննությանը՝ կապված փաստարկման տեսության հետ: Այլ մասնագետներ ներակայումը քննում են լայն առումով:

¹ Լ.Գ.Բրուտյան, Փաստարկման լեզվում իմպլիկացիայի և ներակայման հարցի շուրջը (Մանկավարժ, 1991, № 6, էջ 69):

Հայ լեզվաբանության մեջ ներակայումը համեմատաբար ուշ է արժանացել ուշադրության² : Ներակայումը սույն հոգևածում քննում ենք լայն առումով և ընդգրկումով: Ուսումնասիրության նյութը ընտրելիս նկատի ենք ունեցել լեզվի իմաստակիր տարբեր ոլորտները, ինչպես և խոսքը: Ներակայումը քննել ենք ամենից առաջ իմաստային առումով, այլև ուշադրություն ենք դարձրել այն հարցին, թե այդ երևույթը ինչպես է անդրադառնում լեզվական կառույցների փոփոխության, դրանով իսկ լեզվի զարգացման վրա: Այս երևույթներն էլ բնականաբար իրենց ուղղակի թե անուղղակի դերն են կատարում լեզվական իմաստի և ձևի փոխհարաբերության մեջ:

Ներակայումը լեզվի գոյությանն ուղեկցվող, նրանից անբաժան երևույթ է, որ հանդես է գալիս նրա իմաստակիր (բառական, ձևաբանական, շարահյուսական) մակարդակներում՝ դրսևորելով յուրաքանչյուր մակարդակի բնույթով պայմանավորված յուրահատկություններ: Այն հանդես է գալիս նաև խոսքում, հատկապես նախադասությունների կապակցության մեջ:

Նախ՝ բառային մակարդակում դրսևորվող ներակայման մասին: Այսպես, «Թագուհի» բառի իմաստը հավասար է նրա բաղադրիչների իմաստների գումարին: «Թագուհի» նշանակում է «կին թագավոր» կամ «թագավորի կին», մինչդեռ «ուհի» ածանցը դրված է ոչ թե «թագավոր» հիմքի (հմտ. ազգականուհի, աշխատավորուհի, բանվորուհի, երգչուհի, ուսանողուհի), այլ թագ արմատի վրա: Այսուհանդերձ, մենք հասկանում ենք չգործածված «ավոր» ածանցի իմաստը, որն առանց անմիջական, ձևային դրսևորման՝ ներակայված է «Թագուհի» բառի իմաստային կառուցվածքի մեջ: «Ժամագործ» բառը նշանակում է «ժամացույցի մասնագետ», մինչդեռ, ինպես տեսնում ենք, այդ բառի մեջ «գործ» ածանցը դրված է «ժամ» արմատի և ոչ թե «ժամացույց» հիմքի վրա, այսուհանդերձ, «ժամագործ» կազմության մեջ նկատի ունենք «ժամացույց»-ը, որի «ցույց» արմատի իմաստը ներակայված է բառի մեջ:

Հայերենում միևնույն հասկացության, նշանակյալի համար ունենք «օդանավակայան» և «օդակայան» (վերջինս հատկապես գործածվում է արևմտահայերենում) բառերը, որոնք նշանակում են «օդանավի կայան»։ Թեև երկրորդ բառի հիմքը ոչ թե «օդանավ» է, այլ «օդ»։ Այլ կերպ՝ այստեղ «նավ» բաղադրիչը ներկայացված է և այն հասկացվում է առանց գործածվելու: Ավելացնենք, որ «օդակայան» բառը պատճենված է հունական ծագում ունեցող եվրոպական *aeropot* բառից:

Ինչպես տեսնում ենք, ներակայման փաստը ինքնին ազդում է բառի կազմության և դրանով իսկ բառաձևի և իմաստի փոխհարաբերության վրա: Ներակայման դեպքում ստեղծվում է բառի ձևի և բովանդակության միջև որոշ հակասություն. դրսևորվող իմաստային բաղադրիչը չի ունենում իր

² В.Х.Багдасарян, Проблема имплицитного, Е., 1983, Л.Г.Брутян, Анализ языковых выражений имплицитно, Е., 1992, նույնի՝ Իմպլիկացիայի հասկացությունը տրամաբանության և լեզվաբանության մեջ (ՀՀ ԳԱ Լրագրեր հասարակական գիտությունների, 1990, № 12), նույնի՝ Բարդ ասույթների գործարանական իմաստների վերլուծության շուրջ (Բանբեր Երևանի համալսարանի, 1996, № 2), նույնի՝ Պայմանական ասույթները թարգմանություններում (Բանբեր Երևանի համալսարանի, 1996, № 3):

արտահայտություն ձևը, բայց ենթադրվում, հասկացվում է: Այսպիսով բաղադրյալ կազմությունը համապատասխանող իմաստը ներակայման հետևանքով կարող է արտահայտվել առավել սակավաբաղադրիչ կազմություն: Կարևոր ենք համարում նշել, որ այս կարգի երևույթները հաճախ չեն մնում առանձին փաստերի սահմաններում, այլ դառնում են գործող օրինաչափություն:

Ներակայումը հանդես է գալիս նաև այնպիսի բազմարմատ ածականական կազմություններում, որոնց վերջին հիմքի ածանցը իր իմաստով վերաբերում է նաև նախորդ բաղադրիչին (բաղադրիչներին), թեև նրանում (նրանցում) գործածված չէ. այլ կերպ՝ առաջին բաղադրիչում (բաղադրիչներում) ներակայությունը ենթադրվում, հասկացվում է բաղադրյալ բառի վերջին ածանցի իմաստը: Ներակայում ունեցող այսպիսի կազմությունները երկու կարգի են: Առաջինի մեջ մտնում են այն բառերը, որոնք կազմված են ժողովուրդների, երկրների, լեզուների անուններից. ինչպես՝ հայ-անգլիերեն (հայերեն-անգլիերեն), լեհ-ռուսերեն (լեհերեն-ռուսերեն), ֆրանս-գերմանական (ֆրանսիական-գերմանական), եգիպտա-սիրիական, հայ-ռուս-լատիներեն և այլն: Այս սկզբունքով կազմված ներակայման մյուս խումբը արդեն համադրական բարդություն է: Կազմության սկզբունքը նույնն է, տարբերությունը նրանց բաղադրիչների մեջ է. ի տարբերություն առաջին խմբի կազմությունների, որոնք երկրների, ժողովուրդների, լեզուների անուններ են, երկրորդ խմբի կազմություններում հանդես են գալիս սովորական հասարակ անուններ: Այդպիսիք են՝ գիտահետազոտական (գիտական-հետազոտական), նյութատեխնիկական (նյութական-տեխնիկական), բառաքերականական (բառական-քերականական), լեզվագրական (լեզվական-գրական), ֆիզիկամաթեմատիկական (ֆիզիկական-մաթեմատիկական), գիտահանրամատչելի (գիտական-հանրամատչելի), ռազմածովային (ռազմական-ծովային) և այլն:

Այսպիսի կազմությունները մեծ մասամբ միևնույն ածանցով ձևավորված ածականների միացություններ են, որոնցում ընկնում է առաջին բաղադրիչի (բաղադրիչների) ածանցը, և վերջին բաղադրիչի ածանցը դառնում է ամբողջ բարդության, այդ թվում և առաջին բաղադրիչի ածանց: Երբեմն պատահում են այնպիսի կազմություններ, որոնցում բաղադրյալ ածականի բաղադրիչներն ունենում են տարբեր ածանցներ, բայց համանիշ իմաստներով, և բաղադրիչների միավորման դեպքում, վերջին ածանցի իմաստից ենթադրվում է նաև առաջին բաղադրիչի ածանցը, որը թեև ձևով տարբեր է, բայց համանիշ է վերջին ածանցին: Այդպիսիք են վերը բերված օրինակներից վերջին երկուսը՝ «ռազմածովային», «գիտահանրամատչելի»: Ուրեմն այսպիսի՝ ներակայման ու միավորման դեպքերում կարևորը լեզվական միավորների իմաստն է և ոչ թե ձևը: Վստահորեն կարելի է ասել, որ այս կարգի համադրական կազմությունները հնարավոր դարձան ներակայման շնորհիվ, այլպես առաջին բաղադրիչի ածանցի պահպանման դեպքում, այսինքն՝ ածանցի արտակա արտահայտման պայմաններում համադրական կազմության առաջացումը բնավ հավանական չէր լինի:

Ներակայումը զգալի յուրահատկություն և ընդգրկում ունի տերմինների և բաղադրյալ անունների կազմության մեջ: Այստեղ դեր է կատարում պայմանականությունը, որը բառակազմական առումով երբեմն կարող է մեծ չափերի հասնել: Բանն այն է, որ մարդու ներգործությունը լեզվի տարբեր բաղադրիչների վրա միատեսակ և համաչափ չէ: Քերականական կառուց-

վածքի և բառապաշարի միջուկի հարցում մարդու ներգործությունը համարյա զրոյի է հասնում: Հետազոտողը ավելի շատ օրինաչափությունը բացահայտողի, ճանաչողի, բացատրողի դեր է կատարում և ոչ թե ստեղծողի, կազմողի: Ինչ վերաբերում է բառապաշարի, այսպես ասած, եզրային շերտերին, մասնավորապես տերմիններին, ապա այստեղ հետազոտողը, կանոնարկողը զգալի գործուն գեր կարող են կատարել՝ կազմել նոր տերմիններ, տերմինային կապակցություններ, բաղադրյալ անուններ և այլն՝ ըստ որում որոշակի տեղ տալով ներակայման գործոնին:

Ներկայումս զգալի դեր է կատարում բառակազմական նաև այլ կառույցների ձևավորման գործում: Ածանցավոր մակբայների մեծ մասում բառերի իմաստային կառուցվածքը դրսևորվում է արտակա կարգով: Այդպիսիք են՝ համեստորեն՝ համեստ կերպով, կտրականապես՝ կտրական կերպով, կատարելապես՝ կատարյալ կերպով և այլն: Սակայն զգալի քանակությամբ ածանցավոր մակբայներ կազմված են բառակազմական հիմքի ածանցի ներակայումով. ինչպես՝ պաշտոնապես՝ պաշտոնական կերպով, Ֆիզիկապես՝ Ֆիզիկական առումով (տեսակետից), հոգեպես՝ հոգեկան առումով և այլն: Ածանցավոր մակբայների կազմության մեջ կան նաև զուգահեռ ձևեր՝ նշված երկու միջոցների դրսևորումներով, այսինքն՝ հիմքի ածանցի արտակա դրսևորումով և ներակայումով՝ նյութականապես //նյութապես, վճռականաբար// վճռաբար, արմատականապես//արմատապես, բարոյականապես// բարոյապես և այլն: Կարելի է վստահորեն ասել, որ այս զուգահեռ ձևերից լեզուն առաջնությունը տալիս է կարճ ձևերին, այսինքն, ներակայումով ձևերին, որոնցում հիմքի ածանցը գործածված է, բայց նրա իմաստը հասկացվում է:

Նշենք, սակայն, որ նման դեպքերում ներակայման հնարավորություններն անսահմանափակ չեն: Սահմանափակումները կարող են լինել տարբեր կարգի: Հիմնական սահմանափակման պատճառ կարելի է համարել այն իրողությունը, որ մակբայի (կամ որևէ այլ խոսքի մասի) բառակազմական բաղադրյալ հիմքի և նրա արմատի միջև իմաստային մեծ տարբերություն կարող է լինել, որի դեպքում ածանցի և նրանով ձևավորված իմաստի ներակայումը դառնում է անհնարին:

Ասվածի լավագույն ապացույց կարող են լինել, օրինակ, «քաղաքակա-նապես» և «տեսականորեն» բառերը. սրանցում «քաղաք» և «քաղաքա-կան» «տես» և «տեսական» միավորներն իմաստով այնքան են հեռու իրարից, որ «ական» ածանցը առանց գործածվելու, միայն ներակայումով չի կարող հասկացվել, որի պատճառով էլ այն չի ներակայվում. չունենք «քաղաքապես» «տեսորեն»:

Բայց այն մակարդակում ներակայումը զգալի չափով նպաստում է բազմաբաղադրիչ հասկացությունները, բազմաբառ կապակցությունների իմաստները կարճ, սակավաբաղադրիչ բառով արտահայտելուն: Այս պահանջը միշտ էլ եղել է լեզվի մեջ, ուստի և իմաստի ներակայումը ուղեկցել է բառակազմությանը: Լեզուների զարգացման ներկա փուլում ներակայումն ավելի մեծ չափերի է հասել՝ կապված հասկացությունների, բառերի ծավալի մեծացման հետ:

Իմաստային ներակայումը հնարավորություն է տալիս, որ ոչ միայն բառը լինի համեմատաբար սեղմ, այլև որ բառակապակցությունը վերածվի բառի, ավելի ճիշտ՝ բառակապակցության իմաստն արտահայտվի մեկ բառով: Այսպես «միջուկագերծ», «ատոմագերծ» բառերը (որոնք գործած-

վում են «տարածք» նշանակող բառերի հետ – «միջուկագերծ աշխարհ, Եվրոպա, երկիր, գոտի» և այլն), իրենց մեջ ունեն զենք ներակա իմաստը և նշանակում են «միջուկային զենքից գերծ» «ատոմային զենքից գերծ» և ոչ թե «միջուկից գերծ», «ատոմից գերծ», որ անիմաստ կլինեն:

«Միջուկային զենքից գերծ» բառակապակցությունում հնարավոր է նորև բաղադրիչի իմաստն արտահայտել ներակա կարգով: Բայց այդ բառակապակցության իմաստը բառակազմության արտահայտելու դեպքում այդպիսի ներակայում հնարավոր է, և հենց այդպես էլ կազմվել է «միջուկագերծ» բառը, որում «զենք» բաղադրիչը չկա, բայց նրա իմաստը ներակա կարգով հասկացվում է: Նույնը վերաբերում է նաև «ատոմագերծ» բառին:

Այլ օրինակ. «հեռուստագրույց» բառը կազմվել է «հեռուստատեսությունում հաղորդվող գրույց» բառակապակցության հիմքի վրա և արտահայտում է այդ բառակապակցության իմաստը: Առանց որոշակի իմաստների ներակայման չէր կարող կազմվել «հեռուստագրույց» բառը: Այնպես որ այդ բառի «հեռուստ» բաղադրիչը «հեռուստատեսությունում հաղորդվող» բառակապակցության ներկայացուցիչն է և ներակայում է այդ իմաստը:

Հետաքրքրական է այս բառի իմաստի հետ կատարված հետազոտ փոփոխությունը: Որոշ ժամանակ հետո առաջացավ հեռուստատեսությունում հետ առնչվող գրույցի մի այլ տեսակ, որը վարողը լինում է հեռուստակենտրոնում, մյուսը (մյուսները)՝ իրենց աշխատանքի, ուսման վայրում կամ այլուր: Զրույցի այս տեսակը նույնպես արտահայտվեց «հեռուստագրույց» բառով: Այս նոր իմաստը եղած բառով արտահայտելու հնարավորությունը տալիս է այն հանգամանքը, որ այդ բառի մեջ «հաղորդվող» իմաստը ներակա կարգով արդեն առկա է և գործում է նախորդ իմաստի դեպքում: Այսպիսով՝ բաղադրյալ բառի մեջ իմաստի ներակայումը հնարավորություն է տալիս, որ այդ նույն բառի մեջ ըստ անհրաժեշտության ներակայվի մեկ այլ իմաստային երանգ կամ իմաստ, որով և բառը կարող է դառնալ բազմիմաստ: Ինչպես կարելի է նկատել, այս հարցում որոշակի դեր է կատարում արտաբերական անհրաժեշտությունը: Երբ կան արտաբերական իրողություններ, դրա տրամաբանական իմաստավորումը, ապա այստեղից մինչև տերմինային ձևակերպում հաճախ անցումը կատարվում է ներակայման միջով, քանի որ բազմաբառությունից լեզուն ձգտում է խուսափել, իսկ վերջինիս լավագույն միջոցը ներակայումն է:

Լեզվի զարգացման դեպքում ներակայման դերի կարևորությունն ավելի ակնհայտ է դառնում, երբ հաշվի ենք առնում այն իրողությունը, որ, ինչպես նշվեց վերը, ներակայումը հաճախ համակարգային ընդգրկում է ունենում: «Հեռուստ» բաղադրիչը մի քանի տասնյակ բառերում հանդես է գալիս որպես «հեռուստատեսություն» բառի ներկայացուցիչ, որ նշանակում է՝ «հեռուստ»-ը այդ բաղադրյալ բառի մյուս բաղադրիչների իմաստն արտահայտում է ներակայումով. հիշենք՝ հեռուստահաղորդում (հեռուստատեսային կամ հեռուստատեսությունում իրականացվող հաղորդում), հեռուստակայան, հեռուստաաշտարակ, հեռուստաթատրոն, հեռուստատեսիոնիկա, հեռուստադիտող և այլն:

Այսպիսի փաստերը ցույց են տալիս, թե ինչպիսի կարևոր ու յուրահատուկ դեր է կատարում ներակայումը բազմաբառ բառակապակցություններից բաղադրյալ բառ կազմելու, այլ կերպ ասած՝ բազմաբառ

բառակապակցությունների իմաստը սակավ բաղադրիչ ունեցող բաղադրյալ բառով արտահայտելու գործում: Այսպիսով՝ ներակայումք նպաստում է, որ լեզվական մի մակարդակի միավորը վերածվի մի այլ մակարդակի միավորի, մասնավորապես շարահյուսական մակարդակի միավորը վերածվի բառական-բառակազմական մակարդակի միավորի: Խոսքն այն մասին է, թե առանց ներակայման այդ վերածումը տեղի չի ունենում: Այստեղ խոսքն այն մասին է, որ ներակայումք մեծապես նպաստում է դրան:

Անցնենք ներակայման դերին բառակապակցությունների ձևավորման գործում: Խոսքը վերաբերում է այն դեպքերին, երբ առավել ծավալուն, բազմաբառ բառակապակցություններից ձևավորվում է առավել սակավաբառ բառակապակցություն: Միանգամից նշենք, որ հաճախ ներակայումք կատարվում է մեծ չափերով, և արդյունքը՝ ստացվում է ձևավորված բառակապակցության ուղղակի իմաստի անհամապատասխանություն կամ անտրամաբանականություն: Վերցնենք «գունավոր» բառով երկու բառակապակցություն՝ «գունավոր հեռուստացույց» և «գունավոր լուսանկարչատուն»: Անհրաժեշտ ենք համարում մի փոքր ավելի մանրամասն կանգ առնել այս երկու բառակապակցությունների իմաստային ու կառուցվածքային կողմերի վրա՝ նկատի ունենալով, որ այս մեկնաբանությունները կարող են օգտակար լինել ընդհանրապես համանման շատ երևույթների ընկալման ու գնահատման հարցում:

Բերված երկու օրինակները որոշիչ-որոշյալի կապակցություններ են, որպիսի դեպքերում որոշիչը բնորոշում է որոշյալի հատկանիշը, տվյալ դեպքում՝ գունային հատկանիշը: Հասկանալի է, որ «գունավոր հեռուստացույց» բառակապակցության մեջ գունավոր լինելու հատկանիշը վերաբերում է ոչ թե հեռուստացույց առարկային, ինչպես որ արտահայտված է, այլ տվյալ տեսակի հեռուստացույցով հաղորդվող պատկերին. այնպես որ ամբողջական անվանումը կլինի «գունավոր պատկերումով հեռուստացույց»: Այստեղ «պատկերումով» իմաստը ներակայված է բառական արտահայտություն չունի: Բայց ինչի՞ հակադրությամբ է գործածվում «գունավոր» բառը, հեռուստացույցի ո՞ր տեսակի: Դրա պատասխանը հայտնի է. ի տարբերություն «սև ու սպիտակ» անվանվող հեռուստացույցի: Հասկանալի է, այս դեպքում ևս «սև ու սպիտակ»-ը վերաբերում է հաղորդվող ու ընկալվող պատկերին: Բայց չէ՞ որ սև ու սպիտակը ևս գույներ են, ուրեմն որքանով է գույն գունային առումով դրան հակադրվում «գունավոր»-ը: Ըստ էության, խոսքը վերաբերում է բազմագույն կամ բնական գույներով հաղորդվող պատկերին: Ի դեպ, այս երևույթի պարզագույն նախադեպն ունենք «գունավոր մատիտ» և «սև մատիտ» անվանումներով: Մոտավորապես նույն երևույթը տեղ է գտել «գունավոր լուսանկարչատուն» բառակապակցությունում, որը տասնամյակներ առաջ կարելի էր կարգալ երևանի որոշ լուսանկարչատների ճակատին՝ որպես ցուցանակ: Սկզբունքորեն այս բառակապակցությունը նման է նախորդին: Հիմնական տարբերությունն այն է, որ այստեղ գունավոր հատկանիշը վերաբերում է լուսանկարին: Ուրեմն գունավոր է («գունավոր հեռուստացույցի» վերաբերյալ վերն ասված վերապահությամբ) ոչ թե լուսանկարչատունը, այլ այն լուսանկարը, որ արվում է այդ լուսանկարչատանը: Շարահյուսական կապակցության տեսանկյունից այստեղ հնարավոր է երկու լուծում. նախ, որ գունավոր որոշիչը վերաբերում է ոչ թե ամբողջ որոշյալին, այլ նրա առաջին մասին («լուսանկար»): Այս

մոտեցումը հետաքրքրական է նաև կառուցվածքային առումով. ստացվում է, որ կարող է լինել որոշիչ, որ վերաբերում է ոչ թե ամբողջ որոշյալին, այլ նրա առաջին բաղադրիչին, և այս հետաքրքրական երևույթը կապվում է ներակայման հետ: Կամ՝ որոշիչը վերաբերում է ամբողջ որոշյալին, բայց վերջինս ներակայությամբ հասկացվում է ըստ վերը տրված մեկնաբանության: Իհարկե, տերմինակազմության ժամանակ այսպիսի մանրակրկիտ վերլուծություն հաճախ չի կատարվում, բայց միևնույնն է՝ այն կատարվում է հաճախ այնքան ինքնաբերաբար, որքան խոսք կառուցելիս: Եվ դա՝ հատկապես այն դեպքում, երբ բառը կամ տերմինը ձևավորվում են խոսքի ընթացքում: Այստեղ դեր է կատարում բառակապակցության, բառի կազմության ներքին մեխանիզմի զգացողությունը, ըստ որում՝ դա վերաբերում է ներակայմանը, որը միշտ և ոչ հաճախ է խոսողի կողմից վերլուծվում գիտականորեն: Վերցնենք մեկ ուրիշ անվանում՝ «սուր վարակիչ հիվանդանոց»: Ուղղակի իմաստով ստացվում է, որ սուր վարակիչ է հիվանդանոցը, մինչդեռ սուր վարակիչ է այն հիվանդությունը, որը կրողները բուժվում են տվյալ հիվանդանոցում:

Այն հանգամանքը, որ այս և նման տերմինները հաճախ թարգմանված են լինում այլ լեզուներից, բնավ կասկածի տակ չի դնում նշված մեկնաբանությունները: Ներակայումը սոսկ լեզվական կառուցվածքային երևույթ չէ, այլ գալիս է մտածողությունից, ըստ որում՝ ոչ ազգային, այլ ընդհանուր մարդկային: Պարզապես այն, պայմանավորված այս կամ այն լեզվի կառուցվածքային տիպով, կարող է ունենալ տարբեր դրսևորումներ, դրսևորման յուրահատկություններ: Այնպես որ տերմինի թարգմանությունը կամ պատճենումը հաստատում է միայն մի բան. ներակայումը հատուկ է լեզուներին ընդհանրապես, և կառուցվածքային նույն տիպին պատկանող լեզուներում այն ունենում է կառուցվածքային համանման դրսևորումներ:

Ներակայումը գործում է նաև ձևաբանական կառուցվածքում: Այս առումով ակնհայտ է ներակայման դերը հատկապես բայի պայմանական կամ ենթադրական եղանակում: Այս եղանակի անցյալ ժամանակի ձևի մեջ առկա է ներակայման պայմանի իմաստ, ըստ որի, բայի արտահայտած գործողությունը չի կատարվել, բայց կկատարվեր մի պայմանի առկայության դեպքում: Ես կգայի, եթե արողը լինեի (եթե ժամանակին ինձ հայտնեիք, եթե փոխադրամիջոց լինեի, եթե անընդհատ անձրև չտեղար և այլն): Պայմանականության ներակա իմաստը ոմանք վերագրում են նաև ապառնի ժամանակին, այսինքն, այդ եղանակին ընդհանրապես: Այս եղանակի իմաստային ու կառուցվածքային ապառնի ժամանակը ներակա պայմանական իմաստ չունի³: Հմմտ. Ես վաղը կգամ: Ես վաղը կգամ, եթե եղանակը բարենպաստ լինի: Հմմտ. նաև՝ Ես վաղը պիտի գամ, եթե եղանակը բարենպաստ լինի: Ես վաղը գալու եմ, եթե եղանակը բարենպաստ լինի: Ինչպես հեշտությամբ կարելի է նկատել, կ եղանակիչով պայմանական եղանակի ապառնի ժամանակում պայմանականության իմաստի տեսակետից նույն իրողությունն է, ինչ որ սահմանական և հարկադրական եղանակների ապառնի ժամանակի մեջ: Ավելին. որոշ յուրահատկությամբ ու դիմային

³ Այս եղանակի իմաստային ու կառուցվածքային քննությունը տես՝ Ս. Գ. Աբրահամյան, Արդի Հայերենի պայմանական եղանակը (ՀՍՄ ԳԱ Տեղեկագիր Հաս. գիտ., 1953, № 9): Պայմանական ասության երանցում ներակայման ուսումնասիրությունը տես՝ Լ. Գ. Բրուտյանի վերահիշյալ աշխատություններում:

սահմանափակությունը կ'եղանակիչով բայաձևերի հետ կարող են պայմանի ստորադաս նախադասություններ գործածվել նաև հրամայական և ըղձական եղանակների հետ: Ինչպես՝ Դու գնա՝, եթե առողջությունդ ներում է: Երանի նա գնա, եթե իրեն էլ հրավիրեն:

Ներակա պայմանականություն կա նաև հարկադրական, սահմանական եղանակների անցյալի ապառնի ժամանակաձևերում: Պիտի գալի բայաձևը ցույց է տալիս անհրաժեշտաբար կատարելիք գործողություն, որը, սակայն, չի կատարվել ինչ-ինչ պատճառով, ինչ-որ պայման չլինելու պատճառով: Նույնը վերաբերում է գալու էի բայաձևին. այն ցույց է տալիս գործողություն, որը պիտի կատարվեր անցյալի համեմատությամբ մի ապառնի ժամանակում, բայց չի կատարվել ինչ-որ պատճառով, ինչ-որ պայման չլինելու հետևանքով:

Ներակայումը գործում է նաև նախադասության մակարդակում և որոշակի ազդեցություն ունի նրա կառուցվածքի վրա, հատկապես առօրյա խոսքում, որտեղից էլ երբեմն անցնում է բուն գրական լեզվին: Ներակայվել կարող են նախադասության տարբեր անդամներ, նաև բարդ նախադասության տարբեր բաղադրիչ նախադասություններ: Դիտարկենք հետևյալ բարդ նախադասությունը: Եթե ինձ հարցնեն, ես դպրոցում եմ: Եթե ինձ կանչեն, ես հիվանդ պառկած եմ: Այս նախադասություններում ներակայված է «կասես» կամ ասացական իմաստ ունեցող այլ ստորոգյալով արտահայտված գլխավոր նախադասությունը: Ասենք՝ «Եթե ինձ հարցնեն, կասես, որ ես դպրոցում եմ»: Մյուս նախադասության մեջ ևս ներակայված է նույնիմաստ գերադաս նախադասություն, որի իմաստը որոշակիորեն համակցվում է: Թեև այն կարող է արտահայտվել բառական տարբեր միջոցներով, բայց բոլորն էլ արտահայտում են ասացական իմաստ՝ կասես, կհայտնես, տեղյակ կպահես, իմաց կտաս, կհաղորդես և այլն: Պատահական չէ, որ երկու կառույցներում էլ ներակայված է ասացական իմաստ ունեցող ստորոգյալ: Այսպիսի ներակայումը ստեղծվում է խոսքային որոշակի պայմաններում, երբ մեկը սպասում է, որ իրեն կարող են հարցնել և որ պետք է հաղորդել (ասել) որևէ պատասխան: Այսպիսի իրադրություն մեջ՝ տրամաբանական ու հասկանալի է ասացական բայի գործածությունը: Իսկ կառույցը սովորական դառնալուց հետո այն կարող է ավելի լայնորեն գործածվել:

Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ բարդ ստորադասական նախադասության գլխավոր նախադասության միտքը հասկացվում է ներակա կարգով, ըստ էության այն չի գործածվում, և իրար հետ կապակցվում են երկու ստորադաս նախադասությունները՝ պայմանի պարագա և ուղիղ խնդիր շարահյուսական գործառույթով՝ «Եթե ինձ հարցնեն, ես գնացել եմ դպրոց»: Ձևականորեն գերադաս նախադասության տեսք ունի «Ես գնացել եմ դպրոց»-ը բայց «Եթե»-ով սկսվող նախադասությունը չի կարող դրա պայմանը լինել. այն պայման է «կասես» գերադաս նախադասության: Բոլոր դեպքերում արտակառուցվածքով պարագա և ուղիղ խնդիր նախադասությունների կապակցությունը ներակայման հետևանքով ձևավորված նոր կառույց է, որ արժանի է հատուկ դիտարկման:

Ուշադրավ է, որ ժողովրդական առածներում, ասացվածքներում «ասել» բայը հաճախ ներակայվում է՝ ինքնին հասկանալի լինելու

պատճառով: Օրինակ՝ «Հասկացողին՝ մին, չհասկացողին՝ հազար ու մին»: «Ասել» բայի ներակայումը լայնորեն տարածված է առօրյա ժողովրդախոսակցական ոճում՝ կապված հեղինակային խոսքի հետ, որին հաջորդում է մեջբերվող խոսքը: Ահա մի մեջբերում Հ.Թումանյանի «Ծիտը» պատմվածքից.

«Ծիտը գնում է, ետ գալի, թե՛ փուշը ե՛տ տուր ինձ»:

Պառավն ասում է.

– Փուշը թոնիրն եմ գցել:

– Ծիտը կանգնում է, թե՛

– Իմ փուշը տուր, թե՛ չէ դեա թուչեմ, դեն թուչեմ, լոչիկդ առնեմ դուրս թուչեմ»:

Ուշադրության արժանի է այն իրողությունը, որ «թե» բառի նշված դերը հանդես է գալիս հեղինակային խոսքի միայն երրորդ դեմքի դեպքում: Դա երևում է բերված նախադասություններում: Այստեղ կարևորը միայն «ասել» բայի կամ ասացական այլ բառի չգործածվելը չէ. կարևոր է նաև այն հանգամանքը, որ ներակայումը այս դեպքում հանգեցնում է շարահյուսական կառույցի փոփոխության, և դա դառնում է օրինաչափություն հատկապես առօրյա խոսակցական ոճում ու շատ բարբառներում:

Առօրյա ժողովրդական ոճում նման դեպքերում «թե» բառին կարող է չնախորդել հեղինակային խոսք, և վերջինս կարող է հասկացվել ներակայումով: Դիտենք այդպիսի կիրառություններ Հ.Թումանյանի «Արջաորս» պատմվածքում:

«Ասի՛ Ավագ, էս օքմին չի, արջ է:

Թե՛ բոհ, չէ, չէ պոզեր:

Ա՛յ տղա, ասի՛ արջ է:

Ես՝ հա, սա՝ չէ, ես՝ հա, սա՝ չէ...

Առավոտը ասի՛ Ավագ, դու խոզի կշտին կաց, ես գնամ տնիցը մի հրացան բերեմ:

Թե՛ դե՛, լավ»:

Եթե փորձենք ներակայման հարցում զուգահեռ անցկացնել Հայոց գրական լեզվի արևելահայ և արևմտահայ տարբերակների միջև, ապա պարզ կդառնա, որ մեծ ընդհանրությունների հետ միասին, որ բնական է, ատկա են նաև տարբերություններ: Կարելի է ասել, որ արևմտահայերենում ներակայումն ավելի մեծ չափով է կատարվում, քան արևելահայերենում: Իսկ սա առավելություն է արևմտահայերենի համար՝ հատկապես բազմաբաղադրիչ, երկարաշունչ բառերի կազմության արդի պայմաններում: Հմմտ. օդակայան և օդանավակայան, հեռատեսիլ կամ հեռացույց և հեռուստացույց, օդույթ և օդային ուժեր:

Կարծում ենք՝ լեզվի զարգացման ներկա պայմաններում ըստ հնարավորին մեծ տեղ պետք է տալ ներակայման օգտագործմանը, որը կարևոր միջոց է բազմաբաղադրիչ ու երկարաշունչ բառերից խուսափելու համար: Ըստ որում, այդպիսի գործնական վերաբերմունք պետք է ցուցաբերել բառը, հատկապես տերմինը կազմելու ժամանակ կամ, համեմայն դեպս, նախքան նրա տարածումը: Եվ դա՝ երկու պատճառով: Առաջին՝ տվյալ լեզվի սկզբունքներով կազմված բառի տարածվածությունը նրա հետագա զոյություն իրավունքն է, որը մեծ դժվարություն կարելի է վերանայել, անկախ այս կամ այն առումով քննադատելի լինելուց: Երկրորդ՝ բառը,

մանավանդ եթե ունի Հաղորդակցային կարևոր արժեք, Հանդես է գալիս որպես արդեն բառակազմական Համակարգի անդամ, ներակայացուցիչ, որի փոփոխությունը կապվում է ավելի մեծ, երբեմն անհաղթահարելի դժվարությունների հետ:

Անդրադառնանք ներակայման Հիմնախնդրին վերաբերող մի քանի Հարցերի ևս: Նախ նշենք, որ, ինչպես ցույց են տալիս փաստերը, լեզվի տարբերակներում, գործառական տարբեր ոճերում ներակայումը Հանդես է գալիս որոշակի յուրահատկություններով, չնայած ամբողջ լեզվում գործող ընդհանուր օրինաչափությունների առկայությամբ: Այդ տեսակետից Հատկապես ակնհայտ տարբերություն կա, մի կողմից, ժողովրդախոսակցական ոճի ու բարբառների, որոնցում ներակայումը գործում է առավելազույն չափով, մյուս կողմից՝ գրական լեզվի գործառական Հիմնական տարբերակների միջև: Այս տարբերության մեջ դեր է կատարում այն Հանգամանքը, որ գրական լեզուն, նրա բառերը, քերականական կառույցները գրավոր կերպով ամրակալված են, և գա նպաստում է գրական լեզվի Հարաբերական կայունությանը, իսկ ժողովրդախոսակցական լեզուն ու բարբառները զուրկ են բուն գրական լեզվին բնորոշ այդ յուրահատկությունից: Սրան ավելանում է այն Հանգամանքը, որ բանավոր խոսքի դեպքում, որպես օրինաչափություն, խոսողը չունի ժամանակի այն լայն Հնարավորությունը, ինչը որ Հատկանշական է գրավոր խոսքի դեպքում: Այս Հանգամանքը նույնպես նպաստում է, որ Հատկապես շարահյուսական կառուցվածքում, առավել ևս խոսքում ժողովրդախոսակցական ոճը, բարբառները ներակայմանը դիմեն առավելազույն չափով:

Երկրորդ տեղում է գեղարվեստական ոճը: Գիտական և պաշտոնական ոճերում ներակայումը Հանգես է գալիս Համեմատաբար քիչ դեպքերում, Հատկապես խոսքային մակարդակում: Դրա պատճառն այն է, որ գիտական և պաշտոնական ոճերին Հատուկ է մտքի ճշգրիտ ու միանշանակ Հաղորդումը, ուստի այդ ոճերում կարիք է զգացվում մտքի, նրա բաղադրիչ իմաստների Հստակ արտակա արտահայտման: Այս Հարցում դեր է կատարում նաև այն Հանգամանքը, որ պաշտոնական և գիտական ոճերում խոսքի իրադրականությունը Հասնում է նվազագույնի, իսկ իրադրականությունը նպաստավոր պայման է ներակայման Համար:

Ներակայման դերը ժողովրդախոսակցական ոճում դիտարկենք Հետևյալ կառույցների վրա.

Նա գրիպ է: Նա Մոսկվա է: Նա ութերորդ դասարան է: Նա գիշերային ճեք է:

Ձևի և բովանդակության Հարաբերության տեսակետից այս նախադասություններում ամենաակնհայտն այն է, որ դրանք բոլորն ունեն Համանման կառուցվածք, և դրանցից ոչ մեկի բովանդակային-Հաղորդակցական նշանակությունը ուղղակիորեն, անմիջականորեն չի Համապատասխանում իր բառաքերականական ձևային արտահայտությունը: Հասկանալի է, որ մարդ չի կարող գրիպ լինել, քաղաք լինել, դասարան լինել, Հերթ լինել: Բանն այն է, որ բերված նախադասությունների բովանդակություններն լրատահայտվում են ոչ թե սոսկ արտակա իմաստով, այլ արտակա ու ներակա իմաստների զուգորդումով: Այստեղ ներակա իմաստները Հասկանալի են դառնում, երբ այդ կառույցները Համեմատում ենք դրանց Համարժեք լրիվ կառույցների հետ, որոնցում բոլոր իմաստներն ունեն իրենց անմիջական արտակա դրսևորումները: Դրանք են.

Նա հիվանդ է գրիպով: Նա գտնվում է Մոսկվայում: Նա սովորում է ութերորդ դասարանում: Նա աշխատում է գիշերային հեռֆի:

Ինչպես երևում է համեմատությունից, առաջին նախադասությունն մեջ ներակայված է հիվանդ, երկրորդում՝ գտնվել, երրորդում՝ սովորել, չորրորդում՝ աշխատել իմաստը: Այս ներակայումները հնարավոր են դարձել լեզվի մեջ և այժմ էլ հնարավոր է բացատրել գրիպ (գրիպով), Մոսկվա (Մոսկվայում), դասարան (դասարանում), գիշերային հեռֆ (հեռֆի) բառերի շնորհիվ:

Քննարկվող կառույցներում ներակայված են նաև քերականական, մասնավորապես հոլովական իմաստներ: Թեև այդ կառույցներում գրիպ, դասարան, Մոսկվա, հեռֆ բառերը դրված են ուղիղ ձևով, բայց դրանց մեջ ներակայված են գործիականի (հիվանդ լինել գրիպով), ներգոյականի (սովորել դասարանում, գտնվել Մոսկվայում), սեռական-տրականի (աշխատել գիշերային հեռֆի) հոլովական իմաստներ: Ներգոյականի ձևը նկատի ունենք արևելահայերենի համար, որին համապատասխանում է արևմտահայերենի ներգոյական-հայցականը:

Ի՞նչ հիմունքով են միևնույն հոլովական ձևի մեջ ներակայվում հոլովական տարբեր իմաստներ, ի՞նչն է տալիս դրա հնարավորությունը: Դրա հնարավորությունը ստեղծվում է ամեն մի նախադասության մեջ գործածված բառի և չգործածված, բայց ենթադրվող բառի իմաստի զուգորդումներով. դրանք են՝ հիվանդ է և գրիպ (ներակայված է գործիականի իմաստ) գտնվում է և Մոսկվա (ներակայված է ներգոյականի իմաստ), սովորում է և դասարան (ներակայված է ներհոյականի իմաստ), աշխատում է և գիշերային հեռֆ (ներակայված է տրականի իմաստ):

Այսպիսով՝ նախադասությունների արտակա իմաստների մի մասը լեզուն արտահայտում է ներակա եղանակով՝ դրանք դարձնելով խորքային իմաստներ, այդ հիմքի վրա նախադասության մեջ տեղի են ունենում կառուցվածքային փոփոխություններ, որոնք գործառական առումով շարահյուսական են, իսկ որքանով որ դրանց կրողները ձևաբանական միավորներ են, դրանով իսկ ներակայումը իր դերն է կատարում ձևաբանական կառուցվածքում, հաճախ որոշակի ազդեցություն գործում ձևաբանական միավորների ձևաիմաստային հատկանիշների վրա:

Առանց ծավալվելու այլ փաստերի մեջ, նշենք, որ դիտարկված և նման կարգի ներակայումների հիմքի վրա հայերենի ժողովրդախոսակցական տարբերակում հոլովական համակարգը ավելի արագ է պարզ դառնում, հարացույցի անդամների նվազման գործընթացն ավելի արագ է կատարվում, քան բուն գրական լեզվում, թեև այդ գործընթացն առկա է ամբողջ հայերենում ընդհանրապես: Կարելի է ասել, որ այս կերպ՝ իմաստի ներակայման ուղիով է, որ լեզուների, մասնավորապես հնդեվրոպական լեզուների հոլովական համակարգերը գնացել են դեպի պարզեցում:

Գրական լեզվում կառուցվածքի պարզեցման միտումի իրացումը, զարգացման ներքին պահանջ լինելով, նաև ժողովրդախոսակցական լեզվի ազդեցության հետևանք է: Կառուցվածքի պարզեցմանը վերաբերող բազմազան երևույթներից նշենք հետևյալը. հայերենում, մասնավորապես արդի հայերենում, միտում կա կապային կապակցությունների քերականական իմաստը որոշ դեպքերում ըստ հնարավորին արտահայտել առանց

կապի, այլ՝ գոյականով կամ գոյականական գործածությունն ունեցող բառով և կապի քերականական իմաստն արտահայտել ներակայումով: Օրինակ՝ Խսահակյանի անվան (փողոց) → Խսահակյանի (փողոց) → Խսահակյան (փողոց), վերաբերվել մեկի (մի բանի) նկատմամբ → վերաբերվել մեկին (մի բանի):

Երկար ժամանակ մրցակցում են «աշխատել որպես» կապակցությունը և նրան համարժեք դարձող «աշխատել» բայի համապատասխան կիրառությունը (Նա որպես ուսուցիչ է աշխատում: Նա ուսուցիչ է աշխատում): Որոշ լրագրեր վերջին տարիներին հակված են գործածելու առանց կապի տարբերակը, որը, ի դեպ, ավելի լայն տարածում ունի առօրյա խոսակցական ոճում: Գրական խոսքում առանց կապի տարբերակի գործածությունն աստիճանաբար ընդլայնման գործում դեր է կատարում այդ կապի իմաստի ներակա արտահայտումը:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում բացառական հոլովի մասնական իմաստով կիրառությունների հետ կապված ներակայումը՝ իր քերականական հետևանքներով հանդերձ: Նկատի ունենք մասնական ենթական, մասնական ուղիղ խնդիրը, ինչպես և բացառականով արտահայտված վերաբերության խնդիրը: Մասնական ենթական և մասնական ուղիղ խնդիրը ցույց են տալիս, որ առարկան նկատի է առնվում ոչ թե ամբողջությամբ, այլ մասնակիորեն: Ահա այդպիսի մեկական օրինակ. Երեկոյին արտասանվեցին Պարույր Սեակի բանաստեղծություններից: Լուսինեն իրեն հատուկ վարպետությամբ ու հուզմունքով կատարեց հայ հոգևոր երգերից:

Բացառականով արտահայտված այսպիսի կիրառությունների հետ երբեմն կարող են գործածվել մասնականության իմաստ ունեցող բառեր. ասենք՝ «...Պարույր Սեակի բանաստեղծություններից մի քանիսը» կամ՝ պարզապես թվել դրանց վերնագրերը: Նույնը վերաբերում է նաև մյուս օրինակին. «...հայ հոգևոր երգերից մի քանիսը» կամ թվել վերնագրերը: Շատ հաճախ, սակայն, բացառականի մասնական իմաստի բառական մասնավորման կարիքը չի զգացվում, և մասնականությունն արտահայտվում է միայն բացառական հոլովով՝ քերականորեն ձևավորելով մասնական ենթակա և մասնական ուղիղ խնդիր: Դա, ինչպես տեսնում ենք, կատարվում է ընդհանուր իմաստի քերականական ներակայման միջոցով: Եթե վերը բերված նախադասություններում ըստ անհրաժեշտության կարելի է ավելացնել բառական արտահայտությամբ մասնականության իմաստ, ապա հետևյալ և նման կառույցներում այդպիսիք սովորաբար չեն ավելացվում. «Ես մեր աղբյուրի ջրից եմ ուզում»: «Ինձ տեղական արտադրանքից տվեք»: Այստեղ բացառականի հետ կապված նախադասության անդամի զեղչում. չկա, այլ կա միայն ներակայում:

¹ Բացառականի հետ գործածված և մաս ցույց տվող բառը մասնական խնդիր չի կարելի համարել: «Այս մսից մի կտոր կտրիր (կռիր, տուր)», մի կտոր»-ը սովորական ուղիղ խնդիր է, «մսից»-ը անջատման խնդիր: Հիշենք, որ խնդիրը բայական անդամի լրացում է և, բնականաբար, այն զնահատվում է բայի նկատմամբ ունեցած հարաբերությամբ, իսկ «կտոր»-ը մասնական իմաստ է արտահայտում. «մսից» բացառականի և ոչ թե բայ-ստորոգյալի հարաբերությամբ: Այն հանգամանքը, որ առանձին դեպքերում բացառականը մոտենում է որոշին, և կարելի է համարել որոշիչ, նույնպես հաստատում է, որ այսպիսի կառույցում այն ուղղակիորեն կապվում է ոչ թե բայ-ստորոգյալի, այլ որոշյալի հետ (եթե,

Վատահորեն կարելի է ասել, որ ներակայումն էական դեր ունի բացառականով արտահայտվող վերաբերության խնդրի առաջացման գործում: Այստեղ նույնպես կարևոր է մասնական իմաստը բացառականի մեջ ներակայելու փաստը՝ որոշակի յուրահատկություն, ի տարբերություն վերը նշված դեպքերի: «Պատմել (խոսել) մանկությունից (անցյալից, պատերազմից, պատանեկությունից, ուղևորությունից)» կառույցում ներակայված է մասնականության իմաստ (պատմել մի դեպք, մի բան, եղելուօրում և այլն), որը, սակայն, վերացական-քերականական բնույթ ունի, բառերով չի մասնավորված: Այսպիսով, «պատմել» և ներգործական սեռի ասացական մյուս բայերի ենթադրվող ուղիղխնդրային իմաստը ներակայվում է բացառականի մեջ, և ձևավորվում է բացառականով վերաբերության խնդիր: Վերը խոսք եղավ այն մասին, որ ներակայումը տվյալ կառույցի մեջ կարող է հանդես գալ հենց սկզբից՝ նրա ձևավորման ժամանակ: Անդրադառնալով այս հարցին՝ նշենք, որ այս երևույթը լայնորեն տարածված է հատկապես բաղադրյալ տերմինների, անվանումների կազմության մեջ: Սահմանափակվենք երկու բնորոշ օրինակներով, որոնք, ի դեպ, թարգմանաբար են անցել հայերենին: Նկատի ունենք «Հմիացած երկրներ» և «Անկախ պետությունների համագործակցություն» անվանումները: «Չմիացած երկրներ» հասկացությունը հայտնի է ոչ հեռավոր անցյալի միջազգային կյանքին ծանոթ ամեն մեկին: Այդպես էին անվանվում այն երկրները, որոնք միացած չէին ՆԱՏՕ-ին և Վարչավայի պայմանագրին: Եվ քանի որ ճշգրիտ անվանումը շատ երկար ու անբարենհունչ կլիներ, այդ պատճառով էլ որոշակի պայմանականությամբ ընտրվել է հիշյալ կարճ ձևակերպումը, որն իր մեջ ներակա կարգով պահպանում է հիշյալ իմաստը: Նույն սկզբունքով է կազմված մյուս անվանումը՝ «Անկախ պետությունների համագործակցություն»: Անկախ պետությունների տարբեր կազմակերպություններ կան: Արդ. որի՞ մասին է խոսքը, ո՞ր պետություններն են նկատի առնվում այս անվանումով: Այստեղ ևս գործում է ներակայումը: Խոսքը վերաբերում է այն պետություններին, որոնք եղել են նախկին ԽՍՀՄ կազմի մեջ մտնող միութենական հանրապետություններ և որոնք անկախ պետություններ են դարձել միության փլուզման հետևանքով: Բնականաբար, այսպիսի երկար բնութագրումն անկարելի է ամփոփել մեկ անվան մեջ, ուստի տրվել է հնարավոր սեղմ ձևակերպում, որը որոշակի առումով պայմանական բնույթ է կրում:

Իհարկե, բացառականը անջատման խնդիր չէ): Այսպես՝ Այս սատիմից հինգ մետր չափի: Տեղականից երկու տուփ տուր: Բերականության մեջ կողմնորոշման հիմունքը քերականական կառուցվածքային հատկանիշն է: Նա մի շնչով կարդաց Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի առաջին հատորը: «Հատորը», ավելի ճիշտ՝ «առաջին հատորը» «Վարդանանք» պատմավեպի մի մասն է, բայց ոչ մեկի մտքով չի անցնում այն համարել մասնական ուղիղ խնդիր. այն պարզապես սովորական կամ բուն ուղիղ խնդիր է: Համադրենք հետևյալ կառույցները. դպրոցի գույքը, դպրոցի ունեցած գույքը, դպրոցին պատկանող գույքը: Ահնհայտ է, որ ընդգծված միավորները հոմանիշներ են, արտահայտում են միևնույն իմաստը: Բայց դրանք քերականական տարբեր իրավություններ են. «դպրոցի» բառն առաջին օրինակում հատկացուցիչ է, երկրորդում՝ կողմնակի ենթակա, իսկ երրորդում «դպրոցին»-ը կողմնակի հանգման խնդիր է: Այնպես որ՝ լեզվի կառուցվածքային օրինաչափությունները ոչ միշտ են համընկնում մտածողության տրամաբանական օրինաչափություններին:

Ամփոփենք: Ինչպես երևում է բերված փաստերից ու նրանց վերլուծումներից, ներակայումը հայերենում ունի լայն կիրառություն. հանդես է գալիս լեզվի կառուցվածքային իմաստակիր բոլոր մակարդակներում (ձևույթային, բառական, ձևաբանական, շարահյուսական), այլև խոսքի կառուցվածքում: Ներակայման ուսումնասիրումն ինքնին կարևոր հիմնահարց լինելով հանդերձ՝ միաժամանակ առնչվում է լեզվաբանական, տարբեր հարցերի հետ և նյութ կարող է տալ նրանց ուսումնասիրությանը: Նրա դերը մեծանում է հատկապես նրանով, որ այն առնչվում է լեզվի թե՛ համաժամանակյա և թե՛ տարժամանակյա ուսումնասիրության հետ. նրա ուսումնասիրումը կնպաստի լեզվական մի շարք օրինաչափությունների ավելի խոր քննությանը և հատկապես պատճառահետևանքային հարաբերությունների լուսաբանմանը լեզվի զարգացման գործում: Վերաբերելով լեզվական միավորի, կառույցի իմաստային ինքնատիպ արտահայտությանը՝ ներակայումն ուղղակիորեն առնչվում է լեզվի ձևի և բովանդակության հիմնահարցի հետ և կնպաստի վերջինիս առավել համակողմանի քննությանը:

Ներակայումը որոշակի դեր ունի նաև խոսքի ոճավորման հարցում, ուրեմն և առնչվում է ոճաբանության հետ: Հատկապես մեծ է շարահյուսական և խոսքային ներակայման գերը գեղարվեստական խոսքի ոճավորման բնագավառում:

ИМПЛИКАЦИЯ И НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ РАЗВИТИЯ АРМЯНСКОГО ЯЗЫКА

С.Г. АБРААМЯН

Резюме

В статье рассматриваются импликация и ее роль в широком смысле. Автор считает имплицитными те смыслы словообразовательного, морфологического, синтаксического, а также речевого уровней, те смысловые компоненты, которые не имеют собственного языкового выражения и понимаются из эксплицитно выраженной структуры. Такое скрытое выражение имплицитного смысла называется импликацией. Автор обращается к особенностям взаимоотношений формы и содержания языковых единиц, возникшим в результате импликации, рассматривает изменения, развитие различных языковых структур. Импликация сопутствует языку в процессе всего его развития, являясь как следствием, так и средством развития. Импликация в языковой структуре может иметь место также с самого начала ее образования. Это касается особенно вновь образуемых терминов, терминологических выражений, составных имен.